

## ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԵՏ

Ժամանակին հետ, ժամանակին պէս,  
Կը հոսին ջուրերդ, գետ նուիրական,  
Ափերուդ վրայ ուռենիներ կախ՝  
Խորունկ կը խոկան.  
Մի՛ վազեր այդպէս, գետ ապերասան,  
Մինչեւ աւարտել երգըս կարենամ:

Յաւերժանարսեր մեկնեցան վաղուց,  
Եզերմներէդ սուրբ,  
Ծառի մը շուրջն ուսած կը նայիմ,  
Ջուրերուդ պոսոր.  
Մի՛ սուրար այդպէս, գետ նուիրական,  
Մինչեւ աւարտել երգըս կարենամ:

Խորն հայելիիդ՝ ըսուերներ հազար  
Մութ ու դակահար,  
Եւ տեսիլն Անոր որ զերթ ուխտաւոր,  
Տիգրիդ փոխարկեց լոյսի փաղցածոր.  
Մի՛ վազցներ այդպէս, լոյսերու շարանն,  
Ջուրերդ սրբազան,  
Մինչեւ աւարտել երգըս կարենամ:

Երիւզն հեռուն, փոշիներու տակ  
Կը ննչէ անդոր,  
Զայնն է փողերու, խոր դրդրդածայն,  
Կը փանդունն նորէն փաղտները հին,  
Աշխարհները նոր,  
Հալած մոխիր է անցեալ փառներու  
Ծովակն այս Մեռեալ.  
Բայց թող խաղաղին անցեալն ու ներկան,  
Մինչեւ աւարտել երգըս կարենամ:

Վրան մը ինչպէս՝ երկնի դէմ լարուած,  
Լեռն է փորձութեան, չարին տաղաւար,  
Քարերն տակաւին հորաւերներով հին,  
Կախարդանով նոր, հացի չեն փոխուած,  
Բայց մարդն այսօրուան,  
Պատառ մը հացի իր խիղճն է ծախած:

Թող ցամփին ալիւս ջուրերդ, նորդանան՝  
Երգըս կանգ առաւ,  
Բառերու փոխան, արցունքներ կ'իյնան  
Աչքերէս կաթ, կաթ:

Վ.ՏԱՐԱՆԴԻ